ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-5

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

02. 02. 2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան
Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյանը, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մադաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը, Ա. Ղարախանյանը:
Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը, բացելով նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մասին /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
2. 2018-2019ուս. տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Ընթացիկ հարցեր:
   3.1 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:
   3.2 Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների սահմանման մասին: /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Բաց քվեարկությամբ, միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մասին /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ 2018-2019 ուս. տարում Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ծանրաբեռնվածությամբ ֆակուլտետի II, III կուրսերում նախատեսված են կուրսային, իսկ IV կուրսում՝ ավարտական աշխատանքներ: Թեմաները հաստատվել են սահմանված ընթացակարգով ամբիոնի նիստում: Ուսումնական տարվա սկզբին դրանք տրամադրվել են ուսանողներին: Աշխատանքները սահմանված չափորոշիչներով կատարելու համար ուսանողներին բացատրվել են «ԵՊՀ ԻՄ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և

գնահատման» և «Բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման» կարգերը: Ավարտական աշխատանքների կատարումը առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար՝ փորձ է արվել պահպանել պրակտիկայի անցկացման օբյեկտի բնույթի և ավարտական աշխատանքի թեմայի համապատասխանության սկզբունքը:

Տնտեսագիտության տեսություն մասնագիտության IV կուրսի ուսանողներին գիտական ղեկավարների կողմից տրամադրվել են աշխատանքի պլան, գրականության ցանկ: Ներկա դրությամբ ուսանողները կատարել են աշխատանքի մոտ 25%-ը: Նրանք գոհ են տրամադրված նյութերից, պատկերացնում են աշխատանքի կառուցվածքը և հետազոտության խորությունը: Ամբիոնում առկա է ավարտական և կուրսային աշխատանքների խորհրդատվության ժամանակացույց, ըստ որի իրականացվում են ուսանողների և ղեկավարների հանդիպումները:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ Զբոսաշրջություն և Սերվիս մասնագիտությունների համար նախատեսված են կուրսային աշխատանքներ երկու կուրսում /II, III կուրսեր/ և ավարտական աշխատանք IV կուրսում: Թեմաները ամբիոն են ներկայացրել դասախոսները՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Դրանք հաստատվել և տրամադրվել են ուսանողներին ուսումնական տարվա սկզբին: Ամբիոնում առկա են ավարտական և կուրսային աշխատանքների խորհրդատվության ժամանակացույցեր: Սերվիս IV կուրսի բոլոր ուսանողներին տրամադրվել են գրականության ցանկ, աշխատանքի պլան: Ա. Ուլիխանյանը նշեց, որ ուսանողների մեծ մասը կատարում են իրենց աշխատանքները պատշաճ մակարդակով, և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը կարելի է գնահատել բավարար:

Թե Ա. Ուլիխանյանը, թե Ա. Սարիբեկյանը արձանագրեցին, որ հեռակա ուսուցման բաժնում առկա խնդիրների մի մասը արդյունք է դասապրոցեսի ժամանակահատվածի սահմանափակության, որն էլ հանգեցնում է աշխատանքային գրաֆիկի գերհագեցածության:

Արտահայտվեցին - Գ.Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը:

Գ.Հովհաննիսյանը առաջարկեց հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների հետ կապ հաստատել էլեկտրոնային տաբերակով, որը տալիս է դրական արդյունք: Նա նշեց, որ ղեկավարները ուսանողներին տրամադրել են «ԵՊՀ ԻՄ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման» կարգը, որում առկա ժամանակացույցը հնարավորություն կտա ուսանողներին ճիշտ պլանավորել աշխատանքի կատարման ընթացքը: Ամբիոնը ուսանողների մոտ հետազոտական աշխատանք իրականացնելու կարողություններ ձևավորելու համար կազմակերպել է համապատասխան թեմաներով սեմինարներ: Նա նշեց, որ անկախ դժվարություններից անհրաժեշտ է աշխատանքը կատարել պատշաճ մակարդակով:

Որոշեցին – ավարտական աշխատանքների կատարման ընթացքը գնահատել բավարար:

2.*Լսեցին - 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին :*

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետում երկրորդ կիսամյակը արդյունավետ կազմակերպելու համար իրականացվել են մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Կազմվել են ֆակուլտետում գործող մասնագիտությունների 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները, որոնք համապատասխանում են աշխատանքային ուսումնական պլաններին և դասախոսների անհատական բեռնվածություններին: Զուգադիպումներից խուսափելու նպատակով՝ դասատախտակները քննարկվել և համեմատվել են մյուս ֆակուլտետների դեկանների պաշտոնակատարների հետ: Սահմանվել են ժամկետներ դասընթացի փաթեթները վերանայելու և ամբիոններ ներկայացնելու /11.02.19թ./, հարցաշարերը ուսանողներին տրամադրելու /11-25, 02. 2019թ./ համար: Կազմվել են խորհրդատվության ժամանակացույցեր: Ֆակուլտետում երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները բնականոն ընթացքի մեջ են և կազմակերպական հարցերում խոչընդոտներ չկան:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Մ. Միքայելյանը:

Նրանք նշեցին, որ ֆակուլտետում երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները կազմակերպված են պատշաճ մակարդակով, որը վկայում է ֆակուլտետի ստորաբաժանումների համագործակցված աշխատանքի մասին:

Որոշեցին՝

- *տնօրենի հաստատմանը ներկայացնել ֆակուլտետի 2018-2019 ուս. տարվա դասատախտակները՝ ըստ մասնագիտությունների:*
- *2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

3. Լսեցին – Ընթացիկ հարցեր:

3.1 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հիշեցրեց, որ մասնաճյուղում գործում է ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ: Նա նշեց, որ դեկանատի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի կարող է ներկայացվել Զբոսաշրջություն մասնագիտության II կուրսի

ուսանողուհի Անի Ղարախանյանը, իսկ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի՝ Տնտեսագիտություն մասնագիտության III կուրսի ուսանողուհի Տիգրանուհի Թիրաբյանը:

Արտահայտվեցին - Ա. Սարիբեկյանը, Գ. Հովհաննիսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

Որոշեցին - Հավանության արժանացնել 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի Մոնթե Մելքոնյան և Վազգեն Սարգսյան անվանական կրթաթոշակի հավակնորդներ Տիգրանուհի Թիրաբյանի և Անի Ղարախանյանի թեկնածությունները և ներկայացնել տնօրենության հաստատմանը:

3.2 Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալների սահմանման մասին: /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/

Ամբիոնի վարիչները նշեցին, որ բակալավրի ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից: Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքը պարունակում է հիմնախնդրի ինչպես տեսական մոտեցումների շարադրանք, այնպես էլ գործնական վերլուծություններ: Թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ Սերվիս և Տնտեսագիտության տեսություն մասնագիտությունների ավարտական աշխատանքները կարելի է շարադրել 40-50 էջի սահմաններում:

Որոշեցին –բակալավրի ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալներ սահմանել 40-50 էջը:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*